

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
Տէր Ներսէսեան Հ. Ներսէս. - Ուխտական կղզին (1717-1957)	201
ՊԱՏՄԱԿԱՆ	
Արամեան Հ. Օ. - Եազուզի արար պատմա- գիրը եւ Հայերը (չար.)	207
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ	
Յովսէփեան Հ. Ալեքսի. - Արարիկը եւ իւր բարբերը (չար.)	213
ԾԻՍԱԿԱՆ	
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. - Պատմութիւն Հա- յոց Ազգամատոյցին (չար.)	218
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
FEYDIT FRÉDÉRIC - L'Épopée popu- laire arménienne (Suite et fin)	224
ՄԱՀԱԳՐԱԿԱՆ	
Հ. Ն. Տ. - Հանդիսաւ հոգեւոր Արհի. Յովհան- նէս Արքեպիսկ. Նազկեանի եւ Արհի. Պե- տրոս Արքեպիսկ. Քէտիճեանի	232
Հ. Ն. Տ. - Աւետիք Բաճակեանի յիշատակին	237
ԳՐԱԿԱՆ	
ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ. - Արարատին	240
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Աւետիք Ի- սահակեանի յիշատակին	241
ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Անցքը	242
— Անմահութիւն	243
— Միքէլանճելոյ	243
— Թուփա	244
Տէր ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. - Սիրոյ փեթակ	244
— Լիճին երգը	244
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԶԱԳԱՆԳ	
Հ. Ն. Տ. - Հայ երաժշտութիւնը Սրբազան Երգի Միջազգային Գ. Համապաշարին	245
Հ. Ն. Տ. - Սարգիս Խաչատուրեանի ի պատուի	247

SOMMAIRE

	PAGE
ARTICLE DE FOND	
<i>Der Nersessian P. N.</i> - L'Ile des péleri- nages	201
HISTOIRE	
<i>Adamian P. O.</i> - L'historien arabe Yakou- bi et les Arméniens (Suite)	207
ETHNOLOGIE	
<i>Hovsepian P. Alexis</i> - Arabkère et ses mœurs (Suite)	213
LITURGIE	
<i>Hatsouni P. Vardan</i> - Histoire du Bré- viaire Arménien (Suite)	218
PHILOLOGIE	
<i>Feydit prof. Frédéric</i> - L'Épopée populaire arménienne (Suite et fin)	224
NECROLOGIE	
<i>P. N. D.</i> - La mort de Mgr. Jean Naslian et de Mgr. Pierre Kédidjian, archevê- ques arméniens catholiques	232
<i>P. N. D.</i> - En l'honneur du poète Avétik Issahakian	237
LITTÉRATURE	
<i>Issahakian Avetik</i> - À l'Ararat	240
<i>Hovhannessian P. Vahan</i> - En l'honneur d'Avetik Issahakian	241
<i>Djanachian P. Mesrob</i> - Le passage	242
» » - Immortalité	243
» » - Michel-Ange	243
» » - Mon arbuste	244
<i>Der Ghazarian P. Éphrem</i> - Ruche d'amour	244
» » - Le chant du lac	244
ECHO ARMENIEN	
<i>P. N. D.</i> - Le chant arménien au IIIème Congrès International de Musique Sa- crée	245
<i>P. N. D.</i> - La mémoire du peintre Sarkis Khatchadourian honorée à Venise et à Milan	247



1843 - 1957
ՃԺԵ. ՏԱՐԻ

ԹԻՒ 9 - 10

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXV^e année, 1957, N. 9-10 Septembre - Octobre

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍԹԱԿԱՆ ԿՂԶԻՆ
1717 - 1957

1717, Սեպտեմբեր 8. արարչաւ նաւակ մը, փրփուրներ հաղած, կը ճեղքէ Վենե- տիկի խաղաղ լճակին ջինջ ջուրերը. կը դիմէ դէպի կղզի մը ամայի. հին ապա- տանարանն է ատիկա ուրուկներու, հի- ւանդներու եւ աղքատներու, որոնք չկա- մոթեամբ ու բռնի կը նետուէին անոր պժգալի պարխաղներէն ներս, հեռու մարդկային բնակութիւններէն, անմխի- թար ու տրտմաւ:

Բայց այդ օրը, ողբերգութեան հով մը կը փութացնէ նաւակին ընթացքը: Քա- ոռանամեայ առաջնորդը այդ քառն ճամ- բորդներուն՝ ոտքի է կանգնած. անձկու- թեամբ, հեւ ի հեւ կը համրէ թիւրու ան- հատնում ճողփիւնները, պահիկ մը առաջ հայր լքուած կղզեակին ցոլքերը նշմարելու տենչով: Մխիթար Արքահայրն է այդ պինդ բռնած Վենետիկի Ծերակոյտին հրա- մանագիրը՝ կը մտնէ Ս. Ղազար կոչուած կղզին, որ ի՛րն է այլեւս եւ իրեններունը: Յուզուած է Մխիթար... եւ միարանները արդէն իսկ թափօր կազմած կը դիմեն կղ-

զեակին կիսափուլ մատուռը, չնորհաւա- լութեան երգեր հիւսելու Աստուածամօր, որուն տօնին օրը, ահաբեկիչ փոթորիկէ մը հալածական, ահա կը մտնեն իրենց տունը: Եւ ի՛նչ տուն. քանի մը խարխուլ պատեր:

Եւ առնոց վրայ կը դրուի հիմը մեր հսկայ Վերածնունդին...:

Իրիկնային ոսկի շողեր, ծիրանեւառ ա- լիքներու մէջէն կու դան քանդակել Մխի- թարեան Տարեգրութեան առաջին էջը: Հոն կը սկսի Հայոց Կղզիին պատմու- թիւնը:

240 տարի առաջ սկսաւ փոխարկումը այն հին բորոտանոցին, ու մինչեւ մեր օրերը կ'երկարին անոր յարատեւ եւ յա- րաճուն նորակերտումին աշխատանքները, ժամանակին պահանջներուն համաձայն:

Մխիթար Արքահայր իսկոյն դործի կ'անցնի, նախ եւ առաջ իր տանեւեց միարաններուն համար պատշաճ սենեակ- ներ պատրաստելու ծրագրով. ու կը սկսի աշխատանքը վերածնունդին, օգտագոր-

ծելով կարելիին չափ նախկին հիւանդանոցին դանազան շէնքերը, կղզիին արեւելեան ու արեւմտեան կողմերը: Ինք Մխիթար կը յղանայ ընդարձակ ծրագիր մը եւ քսաներկու տարուան յարատեւ աշխատանքով դայն կ'իրագործէ:

1718ին կը ձեռնարկէ, բնակարաններու հարցը կարգադրելէն անմիջապէս վերջ, եկեղեցիին վերաշինութեան. կ'ընդարձակէ դայն, կ'օժտէ հինգ խորաններով մարմարակերտ, կը բարձրացնէ ձեղունը, տանիքը ամբողջապէս կը նորոգէ, կը շինէ ժամերգութեան յարմար դաս մը, պատուհանները կը մեծցնէ կամարածեւ յօրինուածքով: Բնական է այս բոլոր ծախքերուն ինք չի հասնիր. կը գտնէ օժանդակող աղագայիներ, որոնք հաւատարիմ իրենց աղագային վանասէր նկարագրին, սիրով կ'աջակցին Աբբահօր. եւ օտարութեան մէջ յանկարծակի ընձիւղած այս վանքը հիացմունք կ'աղղէ առաջին այցելուններուն:

«Աշխարհում շաշոյ հոգմերից այս կըրգում ապաստան գտած» — Չարենցի բառերով — վանականները, հայրենիք մը ստեղծեցին օտարութեան մէջ, վանք ու եկեղեցի շինեցին, գրատուն ու թանգարան կերտեցին, թանգարան մանաւանդ հայկական ամէն տեսակ սրբութեանց, ի դին դառն զոհողութիւններու:

1724ին կը վերսկսի աշխատանքները, նախորդ ծրագրին հետեւելով. ու նախ կը կառուցանէ նոր թեւ մը, կղզիին հիւսիսակողմը, Ծերոնց սրահ կոչուած, որ կը կապէր արեւմտեան եւ արեւելեան թեւերը:

1726ին, երբ կը սկսին աւելնալ միաբանները, եւ մանաւանդ կը հասնին նոր աշակերտներ, կը ձեռնարկէ շինելու նորընձայարանի առանձին շէնքը, իր յարակից մատուռով, դասարաններով եւ այլ կարեւոր յարկաբաժիններով. աշակերտներուն համար՝ բաւականաչափ թիւով փոքրիկ խցիկներ կը յարմարցուն:

1732ին, երբ աշակերտներու թիւը կ'աւելնայ, եւ խումբ մը երէցներէն կը հասնին

աստուածաբանական դասընթացքի շրջանին, Մխիթար կը ձեռնարկէ շինելու առանձին բաժին մը անոնց համար, կղզիին հիւսիս-արեւելեան կողմը, եւ դայն կ'անուանէ Վարժարան:

1738ին կ'աւարտէ ներքին քառանկիւն մեծ դաւիթը, շինելով նաեւ նոր հարաւային թեւ մը, որ կու դար միացնելու արեւելեան եւ արեւմտեան նախկին թեւերը, որոնք քսան տարի առաջ ձեւացած էին, 1718ին. այդ առթիւ կը վերամշակէ արեւելեան թեւը:

Հիանալի տեսք մը կ'առնէ քառանկիւն մեծ դաւիթը, որ իսկապէս տպաւորիչ բան մը ունի, եւ մինչեւ օրս ալ կը դիւթէ բոլոր այցելունները: Ծրո. Յարութիւն Գաղանձեան, առանձին ուսումնասիրութիւն մը հրատարակած է Մխիթար Աբբահօր ճարտարապետական ձիրքերուն մասին, մի առ մի քննելով անոր ձեռակերտին զանազան մասերը եւ վերլուծելով անոր դժած ծրագրին յաջորդական իրագործումն ու ծաւալումը. այդ առթիւ, հետեւեալ խորհրդածութիւնները կը յաւելու. « Թէ Մխիթար տէր էր ճարտարապետական բարձր ճաշակի, եւ միանգամայն օժտւած էր գեղադիտական նուրբ եւ հաւասարակշիռ զգացողութեամբ, այդ կը յատնուի հնարագիւտ իրագործումովը քառանկիւնի մեծ դաւիթին, որուն առջեւ այցելուն կը համակուրի զուարթ ու երանաւտ խաղաղութեամբ մը, եւ կարծես յղացող ճարտարապետին հոգեմիջակէն բան մը կը փոխանցուի իրեն, նիւթին ընդմէջէն: Քարերուն վրայ արձանացած են այնտեղ Հիմնադրին իսկ զգացումները, կեանքին հանդէպ անոր ունեցած տեսլականը. կամարներուն եւ սիւնակներուն փոխադարձ յարաբերութիւնները, պարապի եւ լեցունի այդ ներդաշնակ համադրութիւնը, շրջակայ բուսականութեան եւ որմերուն երանգներուն նախատեսուած աստիճանաւորումը, այս բոլորը կարծէք կու գան տպաւորելու մեր ողբին մէջ անոր հոգեկան մեծ աշխարհին լայն հայեացքը:

ները» (Բազմավեպ, 1949, Թ. 7-12, էջ 409):

1740ին կ'աւարտին կղզիին հարաւ-արեւելեան կողմի շինութիւնները, տեղանատունը, ընդարձակ եւ չքնաղ գրատունը, նրբարուեստ որմադարակներով. իսկ դարադարանի դահլիճին առաստաղն ու որմերը կը նկարագարէ Ծոնիոյ իտալացի նկարիչը, աշակերտ Թիեփոլոյի:

Այս կերպով Մխիթար կ'աւարտէ իր ծրագիրը. կղզին գրեթէ իր ամբողջութեամբ փոխակերպուած է, օգտագործւած են հին շէնքերը, եւ իբր պարտէզ մնացած է միայն անհրաժեշտ հողամաս մը:

Մեկնաստան այս ըստ բոլորին շինեալ եղիւ ի փառս Փրկչին, յաբայութեան Սեբաստացոյ Մխիթարայ վարդապետին. յամին 1740: Ահա այս է այն արձանագրութիւնը, զոր Մխիթար ինք քանդակել տուած է ճաշարանի մուտքի բարաւորին վրայ: Ոչինչով սկսած էր. 250 դահեկանով մեկնած էր Մեթոնէն. իսկ այս մեկնաստանին շինութեան համար ծախսած էր 35.000 դուկատ: Նախախնամութեան հըրձեռքը նշմարած էր Մխիթար իր այս զօր ձեռքը նշմարած էր Մխիթար իր այս հսկայ գործունէութեան մէջ, եւ ինքզինք մոռնալով, արձանագրած էր վերոյիշեալ համեստ տողերը, ուր ոչ մէկ արժանիք կը թուի ստանձնել:

Հսկայական աշխատանք, մանաւանդ երբ նկատի առնենք այն դրական դրանքներն ու բարձրագոյն վաստակները, զոր միաժամանակ կը կատարէր անգլիացի կորովով ու կամքով: Մխիթար հիմնադիր է բառին ամենահարազատ իմաստով. հիմնադիր ու ճարտարապետ իր վանքին, անոր ամէն մէկ մանրամասնութիւններով հանդերձ:

Եւ այսօր ալ, երբ օտարականը մտնէ Ս. Ղազար, առաջին տեսածները նոյն ինքն Մխիթարի կառուցած մասերն են որ կը դիւթեն իր սիրտն ու հոգին:

Մխիթարի մահով չի դադարի Ս. Ղազարի շինարարութիւնը:

1750ին կ'աւարտի շինութիւնը վանքի բարձր զանգակատան, զոր սկսած էր Մխիթար 1723ին:

1789ին, կղզիին հիւսիսային անկիւնը կը կառուցուի փոքրիկ տպարան մը:

1815ին, Ս. Ղազար կ'ունենայ իր առաջին ընդարձակումը: Աւարելոյ Փրանկիսկոս Յովսէփ Կայարը այցելելով կղզին, շատ փոքր կը գտնէ եւ կ'արտօնէ որ ընդարձակուի. նորանոր հողերու յաւելումով կը կրկնապատկուի անոր տարածութիւնը: Եւ կղզին կը ստանայ 13.720 քառակուսի մեզր մակերես (նախորդ չափն էր լոկ 7.200 քառակուսի մեզր):

1825ին կ'աւարտին վերոյիշեալ աշխատանքները, վերի յարկին մէջ կը շինուին մեծ սենեակներ, եւ ընդարձակ ձեմարանը, այն է ընթերցարանը, իբր կաճառական գումարումներու վայր:

1836ին նոր աւելցուած հողամասը կը պարսպապատուի:

1869-75 տեղի կ'ունենայ Գիտութեանց թանգարանին (տպարանի յատկացուած նոր թեւին ծայրը), որմերուն եւ առաստաղին դարդարումը՝ նկարներով եւ գոծէ ոսկեգրուաղ բարձրաքանդակներով:

1887ին, մասնակի հրդեհի մը պատճառով՝ կը վնասուին կարգ մը շէնքեր, կըրգիին արեւմտակողմը: Իսկոյն կը ձեռնարկեն վերաշինութեան. եւ այդ առթիւ կարգ մը փոփոխութիւններ կը մտցնեն ճակատին վրայ. կ'աւելցնեն Նորընծայարանի շէնքին ամբողջական յարկ մը:

1900ին հիմնական նորոգութիւններ կը կատարուին եկեղեցոյ մէջ. կ'ընդարձակեն բեմը, նկարադարդ տպակիներով կը յարդարեն մեծ պատուհանները. եւ յատկապէս գոթական նկարադար մը կու տան ընդհանուրին:

1912ին, վանքին արեւմտեան կողմէն կը չորցնեն ներքին ջրանցը, եւ վանքի ճակատին վրայ կ'աւելցնեն փոքր հողամաս մը, հեռացնելու համար ծովուն ջուրը վանքի պատերէն, դարաւոր խոնաւութեան դէմ պայքարելու նպատակով: Ու

կղզիին տարածութիւնը կը հասնի 16-970 քառակուսի մետրի:

Տարիներու ընթացքին միշտ կը կատարուին ներքին նորոգութիւններ ու բարեփոխումներ, արդիական պահանջներուն հետեւելով:

1947-52 տեղի կ'ունենայ կղզիին երրորդ ընդարձակումը, հարաւ ու արեւմտեան կողմերէն. կղզիին ընդարձակութիւնը կը կրկնապատկուի: Մենք ականատեսներն ենք այս հսկայ աշխատանքին ու համարած ենք բաւ առ բաւ այն հողը, որ ամէն օր կու գար աւելնալ մեր փոքրիկ Հայաստանին վրայ. անիրականալի կը թուէր մեզի, երբ առաջին եզերանշանները սկսան զետեղել ջուրին մէջ, երբ առաջին նետուած քարերը կ'անհետանային խկոյն ջուրին յատակը: Բայց հիմա արդէն նոր տունկերով ու ձկնորսական ծառերով զարդարուած, հարսի նման լճակին մէջ կը շողալ, գրաւելով ամէն զբօսաշրջիկի ու շաղկապիչները:

Նոր հողամասին պարսպաւորումին համար օժանդակեցին բազմաթիւ ազգայիններ, մասնաւորապէս Միլանի մեր սիրելի ազգակիցներէն շատեր:

Վանքին այս վերջին ընդարձակումը մասնաւոր նպատակներ ունէր. եւ այդ՝ նոր ու արդիական պահանջներով ճոխացած գրադարանի ու թանգարանի կարիքն է. մեր մամուլին բոլոր հաւաքածոները, հնութեանց յարգի բեկորները երթալով վը շատնան ու կը բազմապատկուին, մասնաւորապէս նուիրատուութիւններով. հարկաւոր էր արդիական չէնք մը, արդիական դասաւորում մը: Եւ առաջին քայլը այս մեծ ծրագրին արդէն իսկ եղած է. վանքին ընդարձակումը. շնորհիւ Խտալական կառավարութեան բարեացակամ վերաբերումին, ինչպէս նաեւ Վենետիկի Վճակին Վերին Հսկողութեան պաշտօնէութեանց սիրալոյսով թոյլտուութեան:

Եւ ահա ձայն մը Ամերիկայէն կու գայ լրացնելու վանքին ազգաչէն նպատակները: Ինչպէս Միլիթարի օրով բազմաթիւ

հայրենակիցներ սատար կը կանգնին վանքին կառուցումին, այս անգամ ալ, աղւալին արժէքներու պահպանութեան վստիքով բորբոքուն ազգային մը ուղած է յաւերժացնել իր ծնողներուն յիշատակը: Վանքին Ընդհ. Արբաւայրը, Գերպ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան, վերադառնալով Ամերիկայէն, բերաւ աւետիսը՝ թէ Տիար Արամ Տէր. Զաքարեան, Ֆրէշտոյէն, յայտարարած է՝ հանդէսի մը առթիւ՝ որ սիրալոյսով կը նուիրէ մեծ դումար մը, Ս. Ղազարու մէջ կառուցանելու համար արդիական նոր գրադարան-թանգարան մը, օժտուած հակահրդեհ եւ այլ կարեւոր միջոցներով, ամէն տեսակէտով վորուստէ եւ փճացումէ փրկելու համար հայ արուեստին դարաւոր յիշատակարանները:

Անսահմանօրէն շնորհակալ ու երախտապարտ ենք այս ազնիւ եւ ազգասէր մը տաժումին ու փափաքին համար. եւ մեզի հետ նաեւ ամբողջ ազգը: Կ'իմանանք թէ բարերարն ինք անձամբ կը փափաքի վանք դալ, ծրագիր մշակել ու իրագործման անցնիլ:

Այսուհետեւ ոչ լոկ Միլիթարեան անունին, այլ ամբողջ ազգային պատմութեան ամենամեծ ծառայութիւնը մատուցած կ'ըլլայ այս իշխանական ու վեհանձն նւիրատուութեամբ. յաւերժօրէն երախտապարտ պիտի մնան նոյնիսկ այն անանուն ու անյայտ դրիչներն ու ծաղկողները մեր հնադարեան մատենաններուն ու այլ բազմաթիւ գանձերուն, որոնք պիտի խօսին յաւերժօրէն հայուն եւ օտարին:



Հայոց կղզին, Ս. Ղազարը ունի մեծագոյն գանձ մը, որ այսօր կեդրոն է դարձած ուխտի եւ արցունքի. մեծն Միլիթարի խնկելի շիրիմն է ատիկա, որով Ս. Ղազար եղած է սրբալոյս ցիրուցան Հայութեան եւ ազգային համեմալի միութեան խորհրդանիշ:

Քանի մը տարի է ի վեր, ազգովին ուխ-

տաղնացութիւններ կը կատարուին Երանանոր Հիմնադրին դերեղմանին վրայ, կազմակերպութեամբ գաղութահայ անձնուէր աղբայիններու, Փարիզէն ու Մարսիլայէն մասնաւորապէս: Անհամար է թիւը հայ այցելուներու, որոնք երկիւղած յուզումով կու գան իրենց ուխտական մօր վառելու անմահ Սեբաստացիին դերեղմանին վրայ, ու շատեր, թերեւ իրենց բնիկ երկրէն ու տունէն աքսորուելէն ինչպէս, առաջին անգամն է որ ոտք կը վրէպեն նման աղբային հաստատութեան մը սեմէն ներս, ու պահ մը իրենք դիմենք բնիկ մայր հողին վրայ կը դրան, հին ու երջանիկ օրերու վերջնամով:

Հարիւրաւոր ուխտաւորներ, այս տարի ալ հասան կուռնիներու նման. երկիւղած հաւատքով համբուրեցին մեծն Միլիթարի նուիրական դերեղմանը. լացին այնտեղ, ու լացին իրենց հետ նաեւ իրենց մօմերը սիրարծարծ: Զերմեռանդ հաւատացեալի խոնարհ զգացումներով աղօթական երգեր մըմնջցին. ու Սեւանի Տիրամայրը, որ մըմնջցին. ու Սեւանի Տիրամայրը, որ երբեմն երեսնալով՝ քաջաբեց պատանի Միլիթարը եւ ներշնչեց անոր հսկայ դադափարականը՝ աղբային-կրօնական վերանորոգութեան, անշուշտ խօսեցաւ իրենց սրտին ալ, դրաւ այնտեղ երկնային բալասանը խնկարոյր, մայրական քաղցր ժպտով:

Ուխտաւորները այնուհետեւ համակ եռանդաւորութեամբ՝ մօտն վանքի միւս յարկարժիները, տեսնելու համար աղբային դարաւոր յիշատակարաններու ճոխ հաւաքածոները: Այնտեղ Եկեղեցին հայկական դարձաւ տաճար դիտութեան: Ու տեսան այնտեղ մեծն Տիրամայրի եւ Լեւոն Մեծագործի արծաթէ խոշոր դրամները, եւ իրենց սիրտն ալ լեցուցեալ աղբային հրաշքաւորութեամբ. տեսան Լեւոն թագաւորի զարդանկար սուրը, եւ արցունքի խոշոր կաթիլներ կախուցեան իրենց այտերուն վրայ. տեսան Հեթում թագաւորի գեղեցիկ կնիքը եւ յուզուցան: Կուռնիացիներ եւս եւ իրենց հայրենակիցներու ձեռա-

կերտ յախճապակիներուն դարանը համբուրեցին ջերմաջերմ զգացումներով. անոնցմէ մէկը՝ Կոմիտաս վարդապետի մահադիմակին առջեւ երկիւղածութեամբ խոնարհեցաւ, եւ կարծես լսեց պատանի Սողոմոնին չքնաղ ձայնը՝ իրենց եկեղեցիի անմոռանալի դասէն: Կիլիկեցի մը անպատճառ կ'ուզէր տեսնել Հոռմկլայի ձեռագիրներէն մէկը. ուրիշ մը հաստափոր Յայամաւորներուն դիմաց կեցած՝ չէր կշտանար դիտել: Ու դեռ ի՞նչ մանրանկարներ, կերպաններ, կաթողիկոսական կոնդակներ, ձեռագիրներ, արծաթադրուագ կողքեր Աւետարանի կամ Մաշտոցի: Այնթապցի մը անպատճառ դարաւոր բանալ կու տար՝ անգամ մը գոնէ չօլափելու համար արծաթէ սաղաւարտը այն եկեղեցիին, ուր ինքն ու իր պապերն էին մկրտուած. ու կը յիշէր իրենց ժամուն սուրբ քահանան որ ամէն կիրակի ձեռամբարձ կ'աղօթէր իր ժողովուրդին համար, Աստուծոյ սեղանին առջեւ...:

Ու դեռ ի՞նչքան տեսնելու բան կայ. նկարներ Այվաղովաքէն, Շահինէն, Բաշինջաղեանէն, Խաչատուրեանէն, Մուրաֆեանէն, Ֆէթիմեանէն, Աճեմեանէն, Մարտիկեանէն, Մանուկեանէն: Դատարանային անգամ ըլլալով իսկապէս զգացին թէ ինչքան մեծ ազդի մը դաւակներն են:

Փոքրիկ պատանի մը, խանդավառուած այս բոլորէն, կը խնդրէ հայրիկէն որ այլեւս զինք հայկական վարժարան դնէ. ուրիշ մը իր դաւակներուն համար այրբենարան կը փնտռէ. հայկական յիշատակ մը, տուն տանելու համար. հայ թագաւորի նկար մը, զօրավարի կամ բանաստեղծի պատկեր մը, Մայր Հայաստան մը՝ փըրցուած այս փոքրիկ Հայաստանէն. կան ալ որ ափով հող կը լեցնեն թաղիկնակի մէջ, հետերնին տանելու. չէ՞ որ Ս. Ղազարի հողը հայկական է, չէ՞ որ Խրիմեան Հայրիկ քիչ մը հող զրկած է Հայաստանէն, ցանկելու համար Հ. Ալիշանի գերեզմանին վրայ:

